

## ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Հանրէս Պարհական 1620 դարոյն՝ ի  
լոր Պաղայ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ ԱՇԽԱՐՀԱԳՐԱ-  
ԿԱՆ ՄԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՄՈՈւԾՈՂ ՔԻՑ ՀԵՆ Օ-  
ՏԱՐ ԱՋՁԱԳ ՄԵՋ, ԲԱՅԵ ՈՅ ՆՈՅՆԱԲԵՍ ՔԱ-  
ՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԱԼ ԸԱՏՃՆԵՐ-  
ՆՈՒՆ ՄՈՈւԳՈՒԹԻՒՆՆ ԱԼ ԻՐԱՐՄէ ԱՓԱԿԱՍ  
Է : ՀԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԳ ՄԵՋ Ի՞Ւ-  
ԹՐՈՅ ՄԵՂԵԼԱ Ա ԱՎԾ ՀԱՌՈՄԱՅԵցին որ ՄԵԾ  
ԱՆՈՒՆ ՀԱՆԵց ԻՐ ԲԱԳՄԱՄԵԱՅ և ՄԱՆ-  
ՐԱՊԱՄՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՄԲՐԸ  
ՅԱՐԼԵԿԸ, ՀԵՏԼԵԿԱԼ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԵԱՆ  
ԱՐԺԱՆԻ և զուարժավի ՄԵՂԵԿՈՒԹԻՒՆ-  
ՆԵՐՆ ԿՈՒ ՄԱՅ 1620 Եղած Պ ՐՈՐ-  
ՀՆԵԱԳ ՀԱՆԴԻՍԻՆ ՎՐԱՅօք 'ի լոր Պ ու-  
ղա, ուր ինքն ականատես էր . և ասով  
ու ասոր նման քանի մը յիշատակներով  
ալ մեծ լցու կու մայ մեր ազգին այն  
ժամանակի պատմութեանն, և խիստ  
լաւ կը ճանցընէ Պ ահաբասին կարգէ  
դուրս բնաւորութիւնը և 'լոր Պ ու-  
ղայի վիճակն, և մեր Պ ռաքել պատ-  
մընին պատմաճներուն վկայութիւն և  
լրումն կ'աւեցընէ : Պ յս պատմիը Հա-  
մառօտիւ յիշելով Պ ահաբասայ շոգ-  
մոդ բարքը, և Պ րորհնեաց Հանդէս-  
ներուն ներկայ գտնուին ալ, այսպէս  
կ'ըսէ վերջինիս Համար, “ Օ Պ րորհ-  
նէքն մեծախումբ Հանդիփիւ առնել  
” ( տայր ), այլ և ինքն Պ ահն ևս  
” գայր 'ի Պ րորհնէքն և խրախանայր  
” 'ի տեսութիւնն ” : Պ յա այս Համա-  
ռօտ յիշատակն է որ Իտալացի Հեղե-  
նակը այսպէս երկար և մանրամասնա-  
բար կը պատմէ :

ՈՒԱԴԱՏՈՐԸ Պ ապահան գտնուելով  
ուղեց որ անձամբ ներկայ ըլլայ Հանդի-  
փին, ինչպէս որ շատ անդամ եղած էր .  
քանի մը շաբաթ առաջ իրեն կանչեց  
լորձա Լազարը, որ Պ ուղայի զլիսաւոր-

ՆԵՐԷՆ և Հարուստ քրիստոնէներէն մէկն  
է, և եղբօրը՝ լորձա Լէֆերին մեռնե-  
լէն ետե, անոր տեղ Պ ուղայեցւոց ազ-  
գապետ եղաւ . թագաւորը հարցուց  
թէ արդեօք Պ ուղայեցիք աս տարի ալ  
պիտի կատարեն Հանդէսը, և թէ կը  
պատրաստուին Հանդիսաւոր կերպով  
ընելու : լորձա Լազարը պատախանեց  
թէ ամէն տարի ալ տօնը կը կատարեն,  
և այս տարի պիտի կատարեն ինչպէս  
որ ինքը հրամայէ : Ուագաւորը ըստ  
իրեն որ Հանդիսաւոր ըլլուի, վասն զի  
ինքն ալ կ'ուզէ գտնուիլ այս անգամ:  
Պ ուղայեցիք ալ իմանալով պատրաս-  
տուեցան ամենայն կերպով Հանդիսաւոր  
ընելու, և Հանդէսը այսպէս եղաւ :

Տօնին օրը առաւօտը լրւսանալուն  
պէս թագաւորը պահապաններ կեցը-  
նել տուաւ իրեն զինուորներէն ամէն  
Ճամբռու զլուս Ճահարպաղ թաղին դի-  
մաց, և նաև կամուրջին վրայ, ուսկից  
որ կ'անյնուի Պ ուղայ երթալու Հա-  
մար, և հրամայեց որ թող չտան ձիով  
անցնելու՝ բայց միայն պատուաւոր մարդ-  
կանց, որպէս զի ձիերու շատութենէն  
թափօրը և քահանայից արարողութիւն-  
ները գետին վրայ չխափանուին : Խակ  
Պ ուղայի մէջ ամէն տուն որուն դու-  
ուր գետին վրայ նայած ճամբռուն մէջ էր,  
պատրաստութիւն տեսաւ թագաւորին  
անցնելուն . կնիկները իրենց բարեկամ  
կանանց և ազգականաց հետ շատ հա-  
րուստ զգեստներով և գոհարներով զար-  
դարուած էին իրենց կերպով . ամէն  
տան դրան դիմացը տամնը ինդ քսան  
կնիկները խումբ մը կար, և դռներուն  
քով եղած լցին պատրշգամներուն մէջ  
նախաճաշիկներ և ըմպելիքներ պատ-  
րաստեր էին գեղեցիկ և մեծազին ա-  
մաններով . բոլոր ան պատրշգամներն  
ալ երկրին սովորութեանը Համեմատ  
զարդարած էին կապերտներով բանած  
թաղիքներով՝ և շատ հարուստ բարձե-  
րով : Պ ուղայի ուրիշ կնիկներն ալ ամէ-  
նը իր կարողութեր չափ զարդարուած,  
կարգաւ շարուեցան գետին եղելքը, մօտ  
ան տեղին՝ ուր որ պիտի ըլլար տօնին

արարողութիւնը . կնիկները էրիկ մարդիկներէն բոլորովին զատուած կը կենային թագաւորին զինուորներէն պահպանուած , որոնք թող չէին տար անոնց մէջ մօտենալու ոչ ձիու և ոչ մարդու որ և իցէ աստիճանէ ալ ըլլայ . և մեծ յարդութեամբ ու ամենայն քաղաքավարութեամբ ազատ կը պահէին զանոնք : Աւ որովհետև լուսպահանէն ալ կնիկներ եկած էին հանդիսին , և նաև լուսպասապատի մահմէտական կնիկներէն , ասոնց ալ տեղ տրուեցաւ , բայց ՞ ուղայի քրիստոնէ կնիկներէն զատ , և աւելի ցած տեղ , վասն զի թագաւորը այսպէս ուզեց : Կանանց մօտ , բայց միշտ զատուած , կարգաւ կեցան գետին եղերքը բոլոր քահանայք իրենց խաչերովը և արծաթի ծնծղաներով , և վառած մոմերով՝ որոնցմով որ կուգային ամէնքն ալ թափօրին մէջ , և էին տասուերկու եկեղեցիներէ , որոնց տասը ՞ ուղայի մէջ է , երկուքն ալ լուսպահանայ մէջ , և նաև ուրիշ հայերու տներէն , որ ՞ ուղայեցի չեն , և հոս կը ընակին , որոնց նաև քահանայքը և ժողովուրդը եկած էին թափօրին՝ ՞ ուղայեցւոց հետ միանալու համար : Բայց խաչերը արծաթի էին գեղեցիկ և մեծամեծ և մեծ մասն ալ ուեզօծ , և ոմանք ալ լեռան բիւրեղէ և ուրիշ մեծագին նիւթերէ շինուած : Հատ քաղմաթիւ էին աս խաչերը . Աւրոպացի մը որ հետաքրքրութեամբ համրեր էր ըստ ինծի , որ հարիւր հատ համրեր էր , բայց դեռ շատ կար որ չէր կրցած համրել , թող ծնծղաները , որ են կլոր արծաթի թիթեղներ , զանազան կերպով և ձեռվ շինուած , և զաւազաններու վրայ անցուցած խաչերուն պէս : Լուսպահանները ցնցելով և ուրիշ մետաղէ նուազարաններու հետ յարմարցնելով որ կը կոչէին Սանկ , ականջի հաջոյ եղանակ մը կու տային : Վահանայք որ կը ըսնէին խաչերը կամ ծնծղանները կամ ծրագները , ( որ էին հաստ մեղրամումէ կերոններ , վասն զի մեր կերպովը կերոններ ) աս կողմերս

չեն զտնուիր ) հագուած էին հարուստ ուկի բանուածքով շուրջառներ կերպ կերպ ասզնեգործած թէ արեւելեան և թէ եւրոպական ճարտարութեամբ : Լուսպահանները կարծեմթէ չորս հարիւրէն պակաս չէին , վասն զի ամէն մէկ խաչի համար չորս շուրջառաւատոր կար : Բայց թափօրը , կարգաւ կեցած էր գետին եղերքը ուրիշ աշխարհականաց հետ մէկտեղ , որոնց ետևէն կ'երթային կրօնաւորք : Ո՞եզի՞ որ ձի հեծած էինք , տեղ տրուեցաւ գետին առջի թևէն անդին . ուսկից որ ոտքով ալ կ'անցուէր մեծկակ կղզիի մը մէջ , ուր կրօնայ կեցուիլ ջրին ցալքած ատենը . բայց 'ի ձիաւորներէ նաև ոտքով շատ մարդ կ'անցնէր տախտակներու վըրայէն քալելով , շատ մարդ ալ թէ ոտքով և թէ ձիով գետին անդիի եղերքը կը կենար , ՞ ուղայի դիմացը լուսպասապատին կողմէն , որ է լուսպահանայ կողմը :

Հայրն Յովհաննէս՝ Կարմեղեան կրօնաւորաց փոխանորդը , ( Գոստինեանց մեծաւորը իրեն փոխանորդովը , և ես ուրիշ քանի մը Փորթուքէզներու հետ թէպէտ և ձիու վրայ պիտի կենայինք , վասն զի ուր թագաւորը կը կենայ և թագաւորին հետ կը կեցուի , ձիու վրայ պէտք է կենալ , բայց որպէս զի նաև ՞ ուղայեցիքն յարգենք , թագաւորին գալէն առաջ ձիէն վար ինձանք , և երկար ժամանակ պտրտեցանք խաչակիրներուն հետ մէկտեղ , վերջը հայոց պատրիարքին դիմաւորելու գայինք , որ կ'ըսուէր Ո՞ելքիսեղեկ . Հ . Յովհաննէսին և մէկալ մեծաւորին մէծտեղը առնելով զինքը բերինք ինչուան ան տեղը ուր որ ինքը կանկ առաւ թագաւորին սպասելու համար . ուստի մենք նորէն ձի հեծանք և զարձանք մեր առջի տեղը թագաւորին սպասելու , և վերջն ալ իր ետևէն երթալու համար ինչպէս որ սովորութիւն էր և պատշաճ էր : Այսպէս ահա կանուխ առաւոտուրնէ պատրաստած կը կենար բոլոր այս հանդէսը՝ որ գէշ տեսարան ալ չէր , բայց թագաւորը շատ ուշա-

ցաւ, և երբոր հասաւ՝ կէս օրուան քիչ  
մնացեր էր: Այսպիս թագաւորին հա-  
մար սպասելը ձանձրալի չեղաւ, վասն  
զի օդը զմեղ պատուեց, ոչ տաք էր և  
ոչ ցուրտ, հասկա մէկ բարեխառն օդ  
մը ամպերով ծածկուած՝ որոնք թէպէտ  
և անձրեփ նշան կու տային բայց զմեղ  
կը պահպանէին արեւէն, որ աս կողմերս  
ամէն ժամանակ աւելի այրող էքան թէ  
խտալիոյ կողմերը: Խակ հայերը շատ  
տեղ վերցիշեալ նուագարաններուն  
ձայնովը միակերպ կը պարէին և ըմբշա-  
մարտութիւններ կ'ընէին, որով ժողո-  
վուրդը զուարձացաւ երկայն ժամա-  
նակ:

Ո երջապէս թագաւորը հասաւ Ճ'ա-  
հարպաղի ճամբէն, սովորականէն դուրս  
անձունի զգեստ մը հագած, գլուխը  
փետուք մը խոթած, և շատ զուար-  
թութեամբ, իրեն երկու տղոցը հետ  
մէկտեղ, որոնցմէ պղտիկը (վասն զի  
մէկալը չէի կրնար տեսնալ ան բազմու-  
թեան մէջ) հագուած էր ձոխ և հա-  
լուստ ոսկեթել զգեստ մը, և նոյնպէս  
ալ իրեն ձին զարդարած էր: Տղոցմէ  
զատ թագաւորին ետևէն կուգային  
խուսուֆ աղա ներքինապետը, Խա-  
փէնտիար պէյը թագաւորին սիրելին,  
Վշա հածին պալատին հազարապետը,  
և թագաւորին սիրական կնիկ մ'ալ որ  
կը կոչուէր Տւշլա ռըլ: Մ'ոնցմէ վեր-  
ջը ուրիշ պալատականներ և թագաւո-  
րիններքին ընտանի մարդիկներէն կային  
և վերջը մեծ խումբ մը ձիաւորներու:  
Ծխագաւորը ճամբէն անցնելու ատեն՝  
ուր որ ՞ ուղայեցի կնիկներ կը սպա-  
սէին զրանց դիմացը, ամէն զրանց դիմաց  
կը կենար քիչ մը ատեն, ու կը խմէր  
ձիու վրայ, նախաձաշիկներէն կ'առ-  
նուր, և կը դիտէր կանանց պարը, ո-  
րոնց ամէն խումբը թագաւորին դիմա-  
ցը մէկիկ մէկիկ պարեց:

Երբոր խաչերուն հասաւ, շխտակ  
գնաց Պատրիարքին քով, և անոր դի-  
մացը ձիով մտաւ գետին մէջ իրեն որ-  
դիքներովը և իրեն քանի մը ընտանի  
մարդիկներովը, մեր քահանայից, ինծի  
և երկու կամ իրեք անգղիացւոց հետ՝

որմնք հոս կը գահուէին, թողոնիս մէկ-  
տեղ տաստերկու կամ տասմնը հինգ ձիաւ-  
որ էինք: Ծեմնելով թագաւորը մեր  
չ. Յովհաննակար՝ քովը կանչեց, քովի  
մարդիկներուն նշան ըրաւ որ իրեն տեղ  
բանան, որպէս զի անցնի, և ամենայն  
պատուով և քաղաքավարութեամբ ըն-  
դունեցաւ զինքը: Ո երջը սկսաւ իրեն  
սովորական վառվը ուն և գործասէր  
բնութեամբը արարողագետութիւն ը-  
նելու, ետեւ առաջ երթալով, և ինքը  
անձամբ հրամայելով, թէ հօն կենայ  
պատրիարքը, հաս արարողութիւնները  
կատարուին, հօն մօտենանքահանայք.  
Հասարակ ժողովուրդը տեղ բանայ խա-  
չերուն, որպէս զի շատ բազմութիւն և  
անկարգութիւն ըրլայ հօն, և ասոր  
նման ուրիշ հրամաններ:

Ո ագաւորին դիմացը արարողու-  
թիւնները կատարուելն վերջը (որ ու-  
րիշ բան չեն, բայց եթէ քանի մը ա-  
զօթքներ, և ետքը քիչ մը մեռն ջուրին  
մէջ սրսկելով՝ բոլոր խաչերը ջուրին մէջ  
խութել, և քանի մը անձանց ջերմեռան-  
դութեան համար լազալը ջրին մէջ, և  
այն) թէպէտեւ քիչ մը սկսաւ անձրեել,  
բայց թագաւորը ետ չդարձաւ, հապա-  
սկսաւ խօսիլ քանի մը հրաւիրեալ Ո բա-  
ցի քրիստոնէ ազնուականներու հետ,  
որ իրեն հիւրերն էին, և իմ բարեկա-  
մներս, զորոնք տեսաւ գետին վրայէն,  
և ուրիշ ՞ ուղայեցի ազնուականնե-  
րու և հ. Յովհաննակարին հետ, և շատ  
անուշութեամբ վարուեցաւ կէս ժամփ  
շափ: ամէնքն ալ հօն կեցան նաև քա-  
հանայք իրենց խաչերովը: Ո անաւանդ  
թէ թագաւորը խառնուելով մտաւ խա-  
չերուն մէջը, որոնցմէ ոմանք այնպէս  
մօտ էին իրեն, որ կը կարծուէր թէ  
թագաւորը իր ձեռքովը բռնած ըրլայ:  
Բայց ՚ի ուրիշ խօսակցութիւններէ որ  
ըրաւ հոս աեղս, ինչպէս իրեն բնու-  
թիւնն էր մէկ խօսքէն մէկալը ցատքել,  
հարցուց ՞ ուղայեցի լածա՝ Լազարին,  
թէ հայերը զորոնք աւելի լաւ քրիստո-  
նեայ կը կարծուէն Ո բացիքը չէ նէ Լա-  
զարպացիքը: Խոճա՝ Լազարը՝ որուն կնի  
կը Ո բացի ազնուականներէն էր, թէ-

պէտ և Հայերը և Ա բացիք ուրիշ տեղ  
մէկզմէկ ամենայն կերպով կ'առան,  
պատասխան տուաւ թէ Ա բացիք Եւ-  
րոպացոցմէ աւելի լաւ կը կատարեն ծռ  
մապահութիւնները : Պէտք է զիտնալ  
որ արևելքան քրիստոնէից մէջ պահ-  
քը աւելի սաստիկ է , և պահոց զօրու-  
թիւնը այնչափ մեծ կը սեպեն՝ իբր թէ  
աս բանիս վրայ կեցած է աղէկ քրիստո-  
նէ ըլլալը . ուստի ով որ աղէկ կը պա-  
հէ պահքերը իբենց մէջ , ամենէն աղէկ  
քրիստոնէն անիկայ կը համարուի , թէ  
պէտ և ուրիշ բաներու մէջ պատուիրա-  
նագանց ալ գտնուի : Եւ սաստիկ պահք  
պահքելու կողմանէ տարակոյս չկայ որ  
Հայերը ուրիշ ամէն ազգերը կ'անցընեն ,  
և թէ Եւրոպացիք կամ Ա ատինք ամե-  
նէն աւելի թոյլ են : Բայց թագաւորը ,  
որ ինքն ալ բարեկամ չէ պահք պա-  
հքելու , ըսելով թէ իր կազմուածքին  
յարմար չէ , բաւ թէ Խմխօսք պահոց  
վրայ չէ , թողունք Եւրոպացիք որչափ  
կ'ուզեն նէ ուտեն , հապա կ'ուզեմիմա-  
նալ թէ ով աւելի օրինապահէ սուրբ  
պաշտամանց մէջ : Խնատենը Խոճա՞լա-  
զարը խմանալով՝ որ կամ թագաւորը  
կ'ուզէ որ այսպէս ըսուի , և կամ թէ  
ինքն ալ այնպէս ձանցնալով ( վասն զի  
իրաւցընէ մեզի ալ բարեկամ է , և միշտ  
լատինացւոց բաները կը քարոզէ ), բաւ  
թէ իրաւցընէ Եւրոպացիք քրիստոնէից  
մէջ օրինաց բաներու մէջ շատ ձիշդ և  
շատ լաւ են : Ա երջը հարցուց թագաւո-  
րը ։ Յովշաննէսին՝ իսկ դուք Եւրո-  
պացիք , որո՞նք աւելի լաւ կը կարծէք  
Ա բացիքը , թէ Հայերը : Վածի բերան  
քահանայն պատասխան տուաւ թէ ա-  
մենուն մէջն ալ աղէկը կայ գէշը կայ ,  
բայց երբոր թագաւորը ուզեց աւելի  
ձիշդ պատասխան մը , բաւ թէ Հայե-  
րը աւելի լաւ են : — Իրաւ այդպէս է , բ-  
սաւ թագաւորը , և նաև մահմէտակա-  
նաց ալ նայերով՝ Հայերը աւելի լաւ են ,  
վասն զի սուր չունին : Խովի իմացուցքա-  
զաքական բաներու վրայ ունեցած հա-  
մարմունքը : Իսկ ։ Յովշաննէս այս-  
պէս բաւ թէ երեւա Հայոց համայք մը  
ընելու համար , վասն զի նոյն օրը իրենց

հանդիսին օրն էր . բայց ես ըլլայի՛ այս  
պէս չէի ըսեր բոլը ան Ա բացիք ասպետ  
ներուն դիմացը որ հօն կեցեր էին . և  
նաև իրաւանց դէմալ էր : Ոժագաւորը  
իրեն հարցմունքները շարունակելով  
հարցուց ։ Յովշաննէսին , թէ Եւ-  
րոպացիք ալ կը կատարեն աս հանդէսը  
կամ Խաչինքութիւնը . ։  
Յովշաննէս պատասխանեց թէ Այս ,  
իրաւ կը կատարենք , բայց ուրիշ կեր-  
պով և ուրիշ օր , այսինքն Վէտք շա-  
բաթ օրը : Բայց Հալէպ տեղւոյն ժո-  
ղովրդեանը յարմարելու համար՝ մեր  
Վիրանջակեան քահանայք այն արարո-  
ղութիւնը Յայտնութեան օրը կ'ընեն  
ուրիշ արևելքան քրիստոնէից պէս :

Վ.յս միջոցիս անձրել երթալով կը  
սասականար և ճամբաները սկսան ցե-  
խոտիլ , ուստի թագաւորը որպէս զի ան-  
հանդիսաւ լրնէ զժողովուրդը , ելաւ գը-  
նաց հանգուցեալ Խոճա Վէֆէրին տու-  
նը , որ քրիստոնէից զլսաւորն էր , ուր  
կը գտնուէին իրեն իրեք որդիքը , ուրիշ  
պղտիկ մ'ալ սւնէր , բայց անիկայ հե-  
ռու տեղ գացած էր . և աս տղոց անդ-  
րանիկը կը կոչուէր Վէլիք աղա , երկրոր-  
դը Վիրանջակաւլ , երրորդը Վուլթանում ,  
որո՞նք պատրաստուած էին թագաւորը  
ընդունելու իրենց հօրեղբօրը Խոճա  
Վազարին հետ , որ նոյն միջոցը հօն էր ,  
թէպէտ և ինքը զատ տուն կը բնակի :  
Խոլոր տանը և պարտիզին յատակը տա-  
նը գոնէն սկսեալ ինչտան ամենէն ներ-  
քին սենեկներն ալ ոսկիէ և մետաքսէ  
հիւսած կերպասներով պատեր էին , ո-  
րնցմէ շատը աւրուեցան ցեխոտած կօ-  
շիկներէ ոսնակոխ ըլլալով , վասն զի  
սովորութիւն չկայ գրան քովը կօշիկնե-  
րը հանելու , բայց միայն սենեկները  
մանելու ժամանակ , կամ ան տեղերը  
ուր որ իրնայ նստուիլ : Վէնք ինչուան  
տանը դուռը թագաւորին հետ գացինք ,  
ուր որ թագաւորը ինջաւ , և իմացանք  
որ կ'ուզէ ։ Վ ուղայեցւոց հետ մինակ  
մնալ և թէ ալ խօսակցութիւն չուզէր ,  
ուստի մէնք զանազան ճամբաներով ետ  
դարձանք զմեզ անձրեն պաշտպանելու  
համար : Ես Խոճա Վէտիթիքին տունը

գացի , որ ինծի ինսամի էր և հրաւիրեր էր իր տունը կերակուր ուտելու : Ի՞այց թագաւորը լիոձա Աէֆերին տղոցը տունը մտնելէն ետե , հրաման տուաւ որ հիւրերը նորէն կանչուին և դան խօսակցութիւն ընելու իրեն հետ , և մարդիկ խաւրեց կանչելու զանոնք , և անոնք որ ճամբու վրայ գտնուեցան , ելան գացին : Աէր Խւրոպացւոցմէ միայն ճամբու վրայ գտնուողներն էին վերոյիշեալ իրեք քահանաները , որոնք սկսան թագաւորին հետ խօսակցիլ ինչուան որ թագաւորը քաշուեցաւ մէկ սենեակ մը հանգիստ առնելու . համար , և մէկալ նոնք ալ ելան գացին : Ինչ որ ըսուեցաւ ան երկար խօսակցութեան մէջ , չեմ կրնար Ճիշտ պատմել հոն չպանուելուս պատճառաւը , բայց քանի մը գլխաւորները յիշեմ որ վերջը ան քահանաներէն և ուրիշ արժանահաւատ անձինքներէ տեղեկացայ :

Լախ և առաջ թագաւորը ըսաւ շատ անգամ՝ թէ Ավ որ Հիսուսի չի հաւատար , և չի դաւանիր թէ Վրիստոս է Հոգին Իստուծոյ , (ինչպէս իրենք կը քարոզեն) ՚Իւաֆէր կ'ըսուի , այսինքն անհաւատ . և զարմանք չէ որ այսպէս ըսուի , վասն զի մահմէտականք այսպէս կը դաւանին , թէպէտ և չեն իմանար ինչ որ կ'ըսեն , և չեն կրնար ալ ըմբըռնել հոգի բառը նոյն նշանակութեամբ ինչ որ մենք կը հասկրնանք սուրբ Խրորդութեան վրայօք : Ար և իցէ կերպով , թագաւորին խօսակցութիւր տարակոյս չկայ որ մէկ կերպով մը մեր պաշտպանութեանը համար էր : Ի՞այց մեր կրօնաւորներէն մէկը՝ այսինքն Ա . ՚Իիկողայոս ՚Իւրէթէ ( )գոստինեանց մեծաւորին ընկերը՝ որ զեռ նորրնծայ է Պարսկաստանի մէջ , և չէր զիտէր տեղւոյն լեզուն , բարի նախանձով վառուած , չհասկրնալով խօսքին ուժը , տգիտաբար մեծ պարզմութէ գործք մը ըրաւ . լսելով ՚Վրիստոսի անունը և վերջը Քեաֆէր անհաւատ բառը , և զիտնալով որ մահմէտականք կ'ուրանան ՚Վրիստոսի աստուածութիւնը , կարծեց թէ թագաւորը կ'ըսէ , թէ ով որ

Վրիստոսի ՚Վստուած կ'ըսէ կամ ՚Վստուծոյ որդի , անհաւատ է . ուստի իր հաւատքը դաւանելու նախանձով բորբքած՝ համարձակութեամբ առանց վախի թագաւորին զիմացը սկսաւ բարձր ձայնով կանչել թէ ինչ որ թագաւորը կ'ըսէ՝ այնպէս չէ , և ինքը շնտակը պիտի ըսէ՝ թէպէտ և կեանքն ալ երթայ , ձեռքովն ալ վիզը կտրելու նշան ընելով , որպէս զի թագաւորը աւելի լաւ իմաննայ , վասն զի խօսքով չէր կրնար ըսել : ՚Ուգաւորը՝ որ մէկէն իմացաւ նորրնծային սխալմունքը , և ինչպէս որ սովոր է համբերելու անոնց՝ որոնք կը վարուին իրեն հետ այսպիսի պարզմութեամբ և տղիտութեամբ , դառնալով մեր ։ ՚Յովչաննէսին՝ որ միայն ինքը գիտէր տեղւոյն լեզուն , ըսաւ իննտալով . ։ ՚Յովչաննէս , ըսէ սա մարդուն որ ես գէշ չեմ խօսիր , ես լաւ ըսի , բայց ինքը չիմացաւ : ։ ՚Յովչաննէս թողութիւն ուզեց թագաւորէն Ա . ՚Իիկողայոսին գործքին համար , որչափ որ կրցաւ տեղւոյն ամենայն քաղաքավարական կերպերովը , և իմացուց թագաւորին թէ ան երկու ( )գոստինեան կրօնաւորները երկու կզպուած տուներու կրնմանին լի գանձերով , բայց առանց բանալի՛ որ չեն բացուիր և գանձերը չեն ելլար , վասն զի խելացի և բարի մարդիկ են և շատ համարմունք կայ անոնց վրայ , բայց չունին լեզու , որ է բանալի , որպէս զի կարենան իրենք զիրենք յայտնել և ցուցընել ինչ որ ունին :

՚Ուգաւորը ուզեց տեմնել քանի մը սրբոց մասունքներ , և իրեն զիմացը բերել տուաւ . այս մասունքները բերուած էին ՚այսատանէն՝ երբոր ՚Վողայեցիք ՚Վսպահան փիխադրուեցան , և այսօրուան օրս ՚Վ ուզայի մէջ կը պահուին : ՚Խրբոր բերին զանոնք քանի մը քահանայք վրանին շուրջառ առած և մոմեղէններով և ամենայն վայելութեամբ , թագաւորը սաք ելաւ , պագաւ զանոնք , գլխին վրայ զրաւ , հրաման տուաւ քովի եղողներուն որ ամենայն կերպով պարկեցտութեամբ կե-

նան աս սրբազն բամերուս դիմացը , և վերջապէս այն ամենայն պատիւը ըրաւ , ինչ որ կ'ընէ քրիստոնէ թագաւոր մը : Աւ զարմանք չէ , վասն զի մահմէտականք կ'ընդունին սուրբի տեղ ան ամէնքը՝ որ մենք սուրբ կ'անուանենք , թէպէտ և անուննին չգիտնան , գլխաւորապէս անոնք՝ որ Ահմէտէն առաջ եղած են , որոնցմէ մէկ քանին բրուն չէ թէ միայն անուննին գիտեն , հապա նաև պատմութիւննին ունին մէջերնին իրենց մարգարէին գըքին մէջ , խել մը սուտ և անյայտ բաներ մէջը խառնած , ինչպէս սուրբ Յովչաննէս Ակրտցին , սուրբ Գէորգին և քանի մը ուրիշ սրբոց : Ի՞ս թագաւորին ցուցրած կերպերը ան սուրբ մասունքներուն դիմացը , երկու ( զոստինեան կրօնաւորաց առջեւ , որոնք տեղեակ են ան ամենայն պատիւներու որ կը կատարուին քրիստոնէ երկիրներու մէջ , լաւ չերեցան , կասկածելով որ թագաւորը ծաղրելու համար կ'ընէ . և աւելի գէշ երեցաւ երբոր թագաւորը ուզելով ընծայել հաւաքի Յովչաննէսին սրբուհւոյն հափախիմեայ հայաստանի վկայուհւոյն նշխարներէն կտոր մը , բռնեց իր ձեռքովը և կոտրեց սրբուհւոյն ոսկորը , և մաքուր թղթի մը մէջ պլելով հաւաքի Յովչաննէսին տուաւ . աս բանս թէպէտ ( զոստինեան կրօնաւորաց գէշ երեցաւ և կարծեցին թէ արհամարհութիւն մը ըլլայ , բայց հաւաքի աւելի իմացող ըլլալով , ինքը գէշ մորքի չէր երթար , և ոչ ալ բարկացաւ , որ ան պիղծ և անհաւատ թագաւորը դպչի ան սուրբ նշխարներուն , լաւ գիտնալով որ մեծամեծները իրենց երկիրներուն մէջ ինչ որ ուզեն ընել՝ օրինաւոր է , վասն զի արգելուլ չըլլար . և մանաւանդ պէտք է գովել որ թագաւորը թէպէտ և անհաւատ , բայց իրեն ներուն դիմացը այնչափ մեր սրբազն բաներուն պատիւ կ'ընէ , ուսկից մէկալներն ալ սովորին յարգել գոնէ մեր հաւատքը , և մեր բաներուն վրայ մեծ համարմունք ունենան : Ոխագաւորը սուրբ Արդորդութեան վրայ ալ հարց-

մունքներ ըրաւ , ըսելով թէ Անչպէս կրնայ ըլլալ որ մի և նոյն ժամանակին մէջ Աստուած ըլլայ երրեակ և միակ . այս բանիս և Ահարդեղութեան խորհրդոյն մէջ կը կայանայ բոլոր մեր և Ահմէտականաց տարբերութեան ըսկիզբը : Հ . Յովչաննէսը և մէկալնոնք ալ իրեն թարգմանութեամբը՝ շատ պատճառաբանութիւններ ըրին թագաւորին դիմացը . բայց անպտուղ . վասն զի այսպիսի բարձր և դժուարագոյն խնդիր մը բաւականապէս չըացատրուիր քիչ ժամանակի մէջ , և այնպիսի խօսակցութեան ատեն , որ զանազան բաներու վրայ կը խօսուէր , և նաև այն քահանայիցմէ երկուքը լեզուն չէին գիտէր , մէկալն ալ որ քիչ մը գիտէր :

Դեռ շատ բաներ խօսուեր են այն ընկերութեան մէջ թէ կրօնի և թէ արտաքին նիւթոց վրայօք , բայց ես դուրս կը թողում , վասն զի չսեցի , և ոչ ալ ամէն բան պատմեցին ինծի :

( Ատղով մնացածները , պատմեմինչ որ վերջը հանդիպեցաւ : Այբոր անձրեւ քիչ մը դաղբեցաւ , թագաւորը զեռ հիւրերուն հետ էր , և տանը պատուհաննէն նայելով տեսաւ որ Գողազեցի կնիկներ ժողվուած պար կը բըռնէն իր դիմացի տանը առջեւի բարձր հրապարակին մէջ . և այն պարին մէջ ինչպէս արևելքի սովորութիւնէ , իրեք երգ երգեցին տաճկերէն կամ պարսկերէն , որոնցմէ առջինը՝ թագաւորին համար գովեստ և չնորհակալութիւն էր նոյն օրը քրիստոնէից ըրած բարեացը համար , երկրորդ երգը Խոճա Ապարին վրայ էր , մաղթելով իրեն երջանկութիւն և այն ամենայն պատիւները որ թագաւորը ըրած է իրեն , ինչպէս նաև իրեն եղբօրդորդոցը . և երրորդը աղանք մը առ Աստուած , թագաւորին երջանկութեան և կենաց համար : ( Ագաւորը որ մեր հաւաքի Յովչաննէսին դիմացը միշտ կը զգուշանար ամէն բանէ որ կրնար գայթակղութիւն մը տալ , վախնալով որ քահանային գէշ երենան այն կանանց պարերը , ևս առաւել որ

Պարսից մէջ սովորութիւն չկայ որ  
մահմէտական հարուստ կնիկներ պա-  
րեն կամբաց տեսնուին մարդկանց դի-  
մացը , տարակուսանքով մը հարցուց թէ  
Այս ՞ ուղայի կնկանց պարելը մեղք  
է : Ի՞ահանայն որ վար զարնելու բան  
չէր գտներ , մանաւանդ թէ կ'ուղէր  
գովել թագաւորին առջև քրիստոնէ  
՞ ուղայեցոց բաները , պատասխան  
տուաւ թէ մեղք չէ . և թէ քրիստո-  
նէ երկիրներ ոչ միայն ազնուական կը-  
նիկներ՝ հապա նաև թագուհիները  
բաց կ'երենան և կը պարեն ամենուն  
դիմացը . և թէ նաև Այսուածաշնչին  
մէջ կը կարդացուի որ Հքէից կնիկները  
կը պարէին Այսուղայ և Դաւթի դի-  
մացը , և թէ վերջապէս ամենեին մեղք  
չէ , երբոր գէշ զիտաւորութիւն մը ըլ-  
կայ անոր մէջ : Այս պատասխանիս  
վրայ թէ թագաւորը , թէ ՞ ուղայե-  
ցիք , և թէ բոլոր քովի եղող մարդիկը  
շատ հաւացան :

Վերջապէս լըմբնցաւ խօսակցութիւ-  
նը ուշ իրիկուան ատեն , թագաւորը  
քաշուեցաւ հանգիստ առնելու համար ,  
և ան զիշերը հօն կեցաւ պառկելու ,  
մէկաննք ելան գացին : Հ . Յովհան-  
նէս իր վանքը դառնալէն առաջ , Խոճա  
Այսուածատուրին տունը գնաց , որ կըն-  
կանս՝ քեռայրն է , մեզի այցելութիւն  
ընելու համար , և հօն պատմեց ինձի  
բոլոր վերի ըսածներա , որոնք վերջը ու-  
րիշ շատ անձինքներէ ալ լսեցի :

Լրիրդ առաւօտը ՞ ուղայէն իմ  
տունս դառնալու ատեն տեսայ որ թա-  
գաւորը դեռ Խոճա Աէֆէրին տունն  
էր , և ձամբան հանդիպելով ՞ ուղայի  
մունետիկին , իմացայ անկէ՝ որ թագա-  
ւորը հրամայէր է Այսպահանէն բերելու-  
իրեն կերակուրը որ հօն ՞ ուղայի մէջ  
ուտելէն վերջը դառնայ Ապահան . ինչ-  
պէս որ եղաւ ալ :

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱՆՏՈՆ ՓԱՄՊՈՒԳՃԵՍՅԱ  
ԱՆԱԿՐՈՒ ՌԱՖ . ՎԱՐԺԱԲՐԱԽԻ

## ԲԱ. ԱԿԱԴ. ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ՏՕՄԱՐՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Դամանակի Գլուխուր բաժանմանց և այլ և  
այլ աղքաց ուժարներուն վրայ պեղէիութիւն:

Այս ԵԱՅ. տարուան Շազմավիպին  
մէջ տեսանք թէ մարտիկի ինչ հնարքնե-  
րով ջանացեր են ժամանակին պէս ան-  
գին հարստութեան մը ոչ միայն զիսա-  
ւոր չափերը որոշել այլ և անոր ամենա-  
մանը մասունքներն ալ ճշգել , որպէս զի  
այսպիսի մէկ անգիւտ բանի մը և ոչ  
մէկ պզտիկ կտորն ալ կորառի :

Դամանակին այս չափերը ճշգելէն  
ետե կարգաւ մը անոր բաժանմունքները  
կու գան , որոնց վրայ թէպէտ հօն ալ  
հարեանցի մը խօսուած է , հոս կ'ուղենք  
նորէն ըստ կարի տեղօքը խօսիլ մանա-  
ւանդ այլ և այլ աղքաց գործածած տո-  
մարներուն վրայ , որչափ որ օրազրիս  
չափը կը տանի :

Երբոր կ'ուղենք բան մը չափել՝ զա-  
նիկայ որոշեալ չափի մը վրայ կ'առ-  
նունք , որպէս զի իմանանք թէ չափելի  
իրը որոշեալ չափէն որչափ ու քանի ան-  
գամմեծ կամ պզտիկ է : ( Ճինակի հա-  
մար , երբոր կ'ուղենք երկայնութիւն մը  
չափել՝ ձեռուընիս կանգուն մը կամմէդը  
մը և կամ ուրիշ որոշեալ չափ մը կ'առ-  
նունք ու երկայնութեան վրայ գնելով  
այս չափերէն որչափ ու քանի անգամ  
մէծ ըլլալը կ'իմանանք . և որովհետեւ  
այս որոշեալ չափերը մանը բաժանմունք-  
ներ ալ ունին , անոնք ալ չափելի իրին  
ամբողջ չափէն աւելցած կամ պակած  
մասունքները կը ցուցընեն :

Այսպէս ալ ժամանակը անհուն մի-  
ջոց մը ըլլալը՝ իրեն երկայնութիւնը ո-  
րոշելու համար այլ և այլ չափեր սահ-  
մանուած են , որոնք բոլորը մէկէն մեծ  
չափ մը կը կազմեն , վասն զի իւրաքան-  
չիւր մեծ չափ իրմէ առջի պզտիկ չափին  
գումարէն կը ձեւանայ . և ասոնք ժամա-  
նակին բաժանմունքները կը ցուցընեն :